«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բջջային հեռախոսների դերը անգլերեն լեզվի ուսուցման գործում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ալեյան

Ուսումնական հաստատություն՝ Իսակովի անվան թիվ 132 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Գլուխ 1. Բջջային հեռախոսների դերը անգլերեն լեզվի ուսուցման գործում ---------- 4

Գլուխ 2. Բջջային հեռախոսների կիրառումը անգլերենի դասերին ------- 9

Եզրակացություն ---------- 13

Օգտագործված գրականության ցանկ

Հավելվածներ

Ներածություն

Այսօր ամբողջ աշխարհում նոր տեխնոլոգիաները գնալով ավելի ու ավելի արագորեն են զարգանում՝ ներթափանցելով մարդկային կյանքի բոլոր ոլորտներ: Անլար կապի տեխնոլոգիան այս առումով բացառություն չէ:

Այսօր բջջային հեռախոսները մարդկային կյանքի բոլոր ոլորտներում են առկա, և նույնիսկ հեռավոր գյուղերում այսօր կա համացանցի հնարավորություն, հետևաբար և բջջային հեռախոսներով այս կամ այն բանը սովորելը իրենից բացարձակ չի ներկայացնում դժվարություն:

Բնական է, որ բջջային սարքերը չեն փոխարինում առկա ուսուցման եղանակներին, բայց դրանք ծառայում են որպես նոր միջավայրում սովորելու հնարավորության ընդլայնման հիանալի միջոց:

Բոլոր ակնհայտ առավելությունների հետ մեկտեղ պետք է հասկանալ, որ ամեն ինչ չէ, որ հարմար ու արդյունավետ է շարժական սարքերի միջոցով սովորելու համար: Սակայն մեր կողմից ուսումնասիրվող անգլերեն լեզվի ուսուցումը բջջային հեռախոսներով չի դասվում դրանց շարքին: Ընդհակառակը, օտար լեզու սովորելը բջջային հեռախոսներում ներբեռնված հավելվածների միջոցով լեզվի յուրացման հիանալի տարբերակ է:

Սույն աշխատանքում փորձել ենք ցույց տալ բջջային հեռախոսների օգտագործման առավելությունները անգլերեն լեզուն սովորելու գործում:

Աշխատանքը կատարված է 12 էջի սահմաններում: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններ բաժնից և գրականության ցանկից:

Գլուխ 1. Բջջային հեռախոսների դերը անգլերեն լեզվի ուսուցման գործում

Այսօր բջջային հեռախոսների միջոցով սովորողը վերահսկում է ուսումնական գործընթացը, պարբերաբար սովորողը կարողանում է տեսնել իր արդյունքներն ու գրանցված առաջընթացը լեզվի յուրացման գործում:

Բջջային հեռախոսը կամ բջջային ուսուցումը սովորողներին հնարավորություն է տալիս սովորելու ցանկացած տեղ՝ ավտոբուսում, դրսում կամ աշխատավայրում:

Բջջային ուսուցման առավելություններից մեկն այն է, որ այս տեսակի ուսուցման մեջ մեծապես խրախուսվում է համագործակցային ուսուցումը: Այսինքն՝ տարբեր սովորողներ հնարավորություն ունեն փոխգործակցության միջոցով կիսվել գիտելիքներով, հմտություններով: Համատեղ ուսուցումն օգնում է սովորողներին աջակցել, մոտիվացնել և գնահատել միմյանց, հասնել ցանկալի արդյունքի: Լավ համագործակցային մոտեցում կարելի է ձեռք բերել պարզապես շարժական սարքը որպես ուսումնական միջավայր օգտագործելու միջոցով, որն, իհարկե, ավելի շատ կախված է օգտագործողից, քան սարքից:

Բջջային հեռախոսները ընդամենը սարք են, օժանդակող միջոցներ են, որոնք արդյունավետ օգտագործման դեպքում բերում են զգալի արդյունքների: Այստեղ կարևորն ու հիմնականը ուսանողների միջև հաղորդակցությունն է՝ որպես լեզվի ուսուցման կարևոր գործոն:

Բջջային ուսուցման ինտեգրումը կրթական միջավայրին հպանցիկ գործընթաց չէ, քանի որ վաղուց ի վեր սուբյեկտ-օբյեկտ (ուսուցիչ-աշակերտ) սխեման արմատավորված են հայկական դպրոցներում, մեր մենթալիտետում:

Հայկական դպրոցներում ուսուցիչը սոսկ գիտելիք տվող և ստուգող սուբյեկտն է, իսկ աշակերտն իր հերթին այն օբյեկտն է, որը կլանում է գիտելիքները, այն էլ պասիվ ձևով: Անցումը այլ սխեմայի, որտեղ աշակերտը և՛ սուբյեկտ է, և՛ օբյեկտ, ով նաև օգտագործում է դպրոցի համար ոչ ավանդական ուսումնական գործիքներ՝ բջջային հեռախոսներ, իրականում արմատապես կփոխի ուսուցման ողջ ընթացքը՝ դարձնելով այն շատ ավելի արդյունավետ:

Մեր կարծիքով, ուսումնական հաստատությունում բջջային հեռախոսների արդյունավետ ներդրման համար պետք է ապահովվեն շարժական սարքերի օգտագործման որոշ կարևոր պայմաններ: Դրանք պետք է լինեն հետևյալը հետևյալը.

Նախ, ուսուցիչները պետք է լինեն տեխնոլոգիային տիրապետող և շարժական սարքերին տիրապետող, երբեմն նույնիսկ ավելի բանիմաց, քան սովորողները:

Ուսումնական հաստատությունը պետք է ապահովի շարժական սարքերի օգտագործման բոլոր անհրաժեշտ պայմանները:

Դասերի ընթացքում բջջային հեռախոսների օգտագործումը պետք է քննարկվի ծնողների կամ խնամակալների հետ, քանի որ նրանցից ոմանք կարող են չհամաձայնվել այս մեթոդաբանության հետ կամ հրաժարվել երեխային թանկարժեք սմարթֆոն տալ՝ բացատրելով, որ աշակերտը կարող է կորցնել այն: Արժե նաև հաշվի առնել այն ծնողների ֆինանսական վիճակը, ովքեր չեն կարող իրենց թույլ տալ բջջային սարք: Այս դեպքում ուսումնական հաստատությունը պետք է հոգ տանի նաև այս հարցի մասին և ապահովի սովորողներին այն ամենով, ինչն անհրաժեշտ է աշակերտին:

Ուսուցիչը պետք է պատրաստ լինի հսկայական կազմակերպչական աշխատանքի, այսինքն բացատրի, թե ինչպես աշխատել այս կամ այն գործիքի հետ, քանի որ յուրաքանչյուրն ունի օգտագործման իր առանձնահատկությունները:

Ընտրելով այն հավելվածներն ու նյութերը, որոնցով կաշխատեն սովորողները, պետք է նկատի ունենալ, որ օգտակար հավելվածները միշտ չէ, որ անվճար են: Կան պատրաստի հավելվածների փորձնական տարբերակներ, որոնք սահմանափակ են ֆունկցիոնալությամբ: Ամբողջական տարբերակը ձեռք բերելու համար պետք է վճարել, որը երբեմն չափազանց թանկ է:

Իսկապես օգտագործելի, արդյունավետ ու նպատակային հավելված գտնելու համար պետք է ներբեռնել, ուսումնասիրել դրանցից յուրաքանչյուրի ֆունկցիոնալությունը, հասկանալ, թե որը կբերի ցանկալի արդյունքի, իսկ որը կլինի անարդյունավետ և հարկ կլինի ջնջել, եթե այն չի համապատասխանում նախանշված պահանջներին:

Այս ամենը իհարկե հետաքիքիր է հնչում, բայց ինչպե՞ս կարող են շարժական սարքերը օգտագործվել առարկայական ուսուցման մեջ: Փորձենք պատասխանել այս հարցին անգլերենի դասավանդման համար բջջային տեխնոլոգիաների կիրառման առումով: Բջջային սարքերի միջոցով այս առարկայի ուսումնասիրությունը օտար լեզվի ուսուցման հետաքրքիր, հեշտ հասանելի և համեմատաբար նոր միջոց է, որը մեծ ճանաչում է ձեռք բերում սմարթֆոնների և պլանշետային համակարգիչների շատ օգտատերերի շրջանում, սակայն դեռևս տարածված չէ դպրոցականների շրջանում: Անգլերեն սովորելը ենթադրում է, որ

գործընթացը շարունակական է լինելու, ինչը նշանակում է, որ բջջային տեխնոլոգիաների միջոցով սովորելը, միշտ ձեռքի տակ եղած գաջեթների օգտագործումը հիանալի հնարավորություն է ուսուցման որակն ու ինտենսիվությունը բարելավելու համար:

Անգլերենի դասավանդման ավանդույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման ուսուցումը միշտ սերտորեն կապված է եղել տեխնիկական միջոցների կիրառման հետ: Այսպիսով, լայն տարածում են գտել լեզվաֆոն սենյակները, որոնց օգնությամբ կարելի է տիրապետել օտար խոսքի տարբեր հմտությունների՝ լեզվական հաղորդակցման հմտություններ ձեռք բերել, խոսքի մշակույթին ծանոթանալ, լսել, կարդալ, լեզվի քերականությունն և հարուստ բառապաշարը ուսումնասիրել: Տեխնիկական միջոցները օգտագործվում են վերապատրաստման դասընթացներում մայրենի խոսողների խոսքը վերարտադրելու համար: Լեզվի ուսուցման համակարգչային գործիքները դարձել են շատ տարածված՝ ուսումնական ծրագրեր, էլեկտրոնային բառարաններ և այլն: Օտար լեզուներով աուդիո և վիդեո դասընթացների օգտագործումը ևս շատ տարածված է:

Այսպիսով, կան օտար լեզվի ուսուցման շարժական բազմաթիվ մեթոդներ, որոնք ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների օգտագործումը: Այս մեթոդներն ապահովում են նյութի բարձր տեղեկատվական կարողություն, խթանում են սովորողների ճանաչողական գործունեությունը, մեծացնում դասի տեսանելիությունը, դրա անցկացման ինտենսիվությունը, անհատականացումը և տարբերակումը:

Նման մեթոդների զարգացումը մենք տեսնում ենք լեզվի ուսուցման նոր մոտեցումների առաջացման մեջ՝ հիմնված բջջային սարքերի համար մասնագիտացված հավելվածների վրա: Սրանք քերականության սիմուլյատորներ են, բառարաններ, կայքի հետ ինտեգրված հավելվածներ, որտեղ կարող եք ոչ միայն սովորել բառեր, այլև կարդալ, լսել տեքստեր, լուծել խաչբառեր:

Համացանցում ներկայացված տեղեկատվության, ինչպես նաև առկա բջջային հավելվածների մեր սեփական վերլուծության հիման վրա մենք կտանք դրանցից մի քանիսի բնութագրերը, որոնք ուղղված են անգլերեն սովորելուն:

Learn English Elementary հավելված - մի շարք փոդքասթներ անգլերեն սովորողների համար՝ բջջային հեռախոսներում ներբեռնելու և շարժվելու ընթացքում պարապելու համար: Յուրաքանչյուր դրվագ 20 րոպե է և ներառում է հարցեր հանդիսատեսի համար: Հասկանալու հեշտության համար տրամադրվում է սողացող գիծ:

WORDSHAKE - Ինտերակտիվ խաղ, որում առաջարկվում է սահմանափակ ժամանակում առաջարկվող տառերից հնարավորինս շատ բառեր կազմել: Որքան երկար է խոսքը, այնքան ավելի շատ միավորներ է հավաքում սովորողը:

Learning English With The New York Times. - Հավելված նրանց համար, ովքեր ցանկանում են բարելավել իրենց լսողական ըմբռնումը, կարդալու հմտությունները և համալրել իրենց բառապաշարը: Ուսանողներին առաջարկվում է 12 դաս՝ թերթերի նյութերի, հայտնի կամ պատմական կարևոր հոդվածների հիման վրա:

- Բառեր անգիր անելու ծրագիր, որն առաջարկում է 4 տիպի ուսուցում՝ բառ-թարգմանություն, թարգմանություն-բառ, բառ կառուցող, լսում: Հավելվածը ինտեգրված է կայքի հետ, որտեղ կարող եք սովորել բառեր, կարդալ, լսել տեքստեր, լուծել խաչբառեր: Բոլոր բառերը, որոնք սովորողը սովորում է կայքում, հասանելի են դառնում նաև բջջային տարբերակում:

Իրականում նման հավելվածները այսօր հազարավորն են, որոնք հնարավորություն են տալիս բարելավել անգլերեն լեզվի տիրապետման մակարդակը, մենք պարզապես առանձնացրել ենք որոշ բավականին լավ հավելվածներ, ըստ մեր ուսումնասիրությունների արդյունքների:

Միևնույն ժամանակ, անգլերենի դասավանդման հնարավորությունների ընդլայնման ներուժը կայանում է ոչ միայն բջջային հարթակում առկա գաղափարների շարունակման, անգլերենի դասավանդման բջջային հավելվածների մշակման, այլ նաև սկզբունքորեն նոր ուսուցման մոդելների ներդրման մեջ, որոնք հնարավոր կդարձնեն ուսուցումը շարժական սարքերի միջոցով: Հիմնականում այս մոդելները կարող են կապված լինել օտար լեզվի ուսումնական միջավայրի ընդլայնման հետ, որը նկարագրվում է ինչպես մայրենի լեզվի հետ հաղորդակցական փոխգործակցության հնարավորությունների ընդլայնման, այնպես էլ բառապաշարի, ուսուցման ընդլայնման նոր ուղիներ կառուցելու տեսանկյունից:

Այս ամենից հետո կարելի է եզրակացություն անել, որ բջջային հեռախոսների միջոցով անգլերեն լեզվի ուսուցումը բարդ գործընթաց է, պահանջում է բավականին նյութական և ժամանակային ռեսուրսների ներդրում: Սակայն խելամիտ, մտածված քայլերի շնորհիվ կարող ենք ունենալ այն վերջնարդյունքը, որին ձգտում ենք: Այս մասին օրինակով խոսելը առավել կապացուցի մեր կողմից առաջ քաշված միտքը: Հաջորդ գլխում կներկայացնենք հետաքրքիր խաղ-վարժություններ, որոնք մշակվել են հենց մեր կողմից, հատուկ դպրոցական երեխաների համար:

Գլուխ 2. Բջջային հեռախոսների կիրառումը անգլերենի դասերին

Առաջին գլխում կատարված ուսումնասիրությունների և անձնական փորձի հիման վրա մենք առաջարկում ենք անգլերեն լեզվի ուսուցման համար արդյունավետ մի շարք վարժություններ բջջային հեռախոսների միջոցով:

Մեր կողմից ստեղծվել են անգլերեն լեզվի ուսուցման համար հետաքրքիր խաղ-վարժություններ, որոնց միջոցով դասի ընթացքում երեխաներին հետաքրքիր և միաժամանակ բովանդակալից կերպով մատուցվում է նոր բառապաշար:

Տվյալ մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ երեխաները չեն ձանձրանում դասի ընթացքում, նրանց համար խաղը հետաքրքիր և միաժամանակ ուսուցանող մեթոդ է: Սովորողների ուշադրությունը ստանդարտ դասերի ընթացքում պարբերաբար շեղվում է, թուլանում է կենտրոնացվածությունը, իսկ նման ձևով դասի անցկացման ժամանակ հետարքիր մատուցումը, վառ գույները ապահովում են դասերին երեխաների լիարժեք կենտրոնացում:

Որպեսզի ողջ վերոնշյալը ցույց տանք ավելի տեսանելի, ներկայացնենք կոնկրետ մեկ դասի համար կազմված պլան ու վարժություն: Դասի պլանը, որը պատրաստվել է հատուկ դասի համար, ներկայացված է ստորև՝ աղյուսակ 1-ում: Նպատակն է խաղերի միջոցով հասկանալ, թե որքանով են յուրացրել երեխաները նոր բառերը, ամրապնդել դասի նյութը:

Աղյուսակ 1. Lesson plan for №. 132 School

Teacher

Anahit Aleyan

Grade

6th English by G.Gasparyan, N. Hovhannisyan, H. Kajberuni

Topic

"The Well at the World's end"

Activity type

Jigsaw activity (5m)

Warm up/ preparation

Split the class into 3-4 groups (according to the number of pupils in class). Pupils will read the words with the sound [kw] and pay attention to their pronunciation. Check the knowledge of those words. Drill the pronunciation of the words once more. Tell the pupils that they are going to have cooperative learning as Jigsaw activity and they should work together by dividing the task among all the members in group. and that each of them should be responsible for his/her part in favor of the group. (10m)

Reading activity

The text " The Well at the World's End" is divided into 3-4 passages beforehand. Read some new words on the theme and translate the unknown ones. (10m)

Allow the pupils a few minutes to get ready for the activity. Assign them to read the text "The Well at the World's End" within their groups. Walk around and check for pronunciation and comprehension.

https://wordwall.net/resource/24568574/6g-avchyan-the-well-at-the-worlds-end

https://wordwall.net/resource/24569232/translate-the-new-words-into-armenia

https://wordwall.net/resource/24570095/%d1%83%d0%b3%d0%b0%d0%b4%d0%b0%d0%b9-%d1%81%d0%bb%d0%be%d0%b2%d0%be

Information gathering activity

Explain the students that they will be creating an article about the text using the method of "5 Wh-s". Groups will come and represent the story on their own words (or they should retell it). During the reading the pupils should pick out the main information. (5m)

Writing activity

Then each member from the group goes to the neighbor groups and represents the passage of their group and gives information to fulfill (complete) the entire story. The others write the given information shortly putting attention to the main idea (or facts).the pupils keep changing until all the groups have the entire story done. (5m)

After the work do True/ False activity on page 25.

https://wordwall.net/resource/24552766/adjectivesavchyan

Play labyrinth

Using the new words and word combinations.

https://wordwall.net/resource/24571838/labyrinth

Editing activity

Finally, the groups start representing the whole story and speak about the main idea. They should pay attention to the clue sentences, words, grammar patterns, pronunciation, etc. (5m)

Assessment after the presentation of the story

assess the pupils work according their participation and representation part. (3m)

Կրթական հավելվածների աճող քանակով զարմանալի չէ, որ այս սարքերը դառնում են կրթական միջավայրի արժեքավոր մաս: Ուսանողները այսօր կիրառում են ռոբոտատեխնիկայի ծրագրերը, ներկայացնելով իրենց հեռախոսներից անմիջականորեն եւ դպրոցում բջջային սարքերի իրականացման շնորհիվ ուսուցիչների հետ ուսուցանում են փաստաթղթեր:

Կան բազմաթիվ ծրագրեր, որոնք ընտրում են, սկսած քվեարկության եւ փորձարկման ծրագրերից մինչեւ լեզվի ուսուցման ծրագրեր եւ մաթեմատիկական խաղեր: Socrative- ը այն ծրագիրն է, որը հնարավորություն է տալիս իրական ժամանակում անցկացնել դասախոսություն, իսկ որոշ դպրոցներ օգտագործում են Duolingo- ն որպես ամառային ուսուցման հնարավորություն, օգնելու ուսանողներին նախապատրաստել երկրորդ լեզվի: Որոշ դպրոցներ նույնիսկ դասեր են առաջարկում, որոնք սովորեցնում են ուսանողներին, թե ինչպես պետք է կառուցել իրենց սեփական ծրագրերը, ուսուցանելով նրանց անհրաժեշտ հմտությունները `զարգացնելու մեր թվային աշխարհում:

Եզրակացություն

Ժամանակակից բջջային տեխնոլոգիաներն արագորեն ներթափանցած են մեր կյանքի բոլոր ասպեկտները, ուստի այսօր տեխնոլոգիան կենսական դեր է խաղում գիտելիքի տարբեր ասպեկտների ուսումնասիրության գործում: Իրականում, այսօր մենք կարող ենք ավելի հարուստ բջջային ուսուցման միջավայր ապահովել օտար լեզու, մասնավորապես մեր դեպքում, անգլերեն սովորելու համար:

Բջջային հեռախոսներով ուսուցումը ամենի հետ մեկտեղ բախվում է բազմաթիվ մարտահրավերների, սակայն այն երկրաչափական աճ է գրանցել՝ լեզուների ուսուցման համար ավելի լավ միջավայր ապահովելու համար:

Այսօր օնլայն կամ տարբեր հավելվածների միջոցով դասախոսությունները և աուդիո տարբերակները ապահովում են ուսուցիչների և սովորողների միջև առցանց փոխազդեցությունների ավելի հարմար ձև, առանց որևէ ժամանակի և տարածության սահմանափակման:

Բջջային հեռախոսների միջոցով սովորողները ունենում են ժամանակի և տեղի ազատության ավելի մեծ զգացում, որպեսզի նրանք կարողանան օգտվել ազատ ժամանակից՝ սովորելու երկրորդ լեզուն երբ և որտեղ էլ որ լինեն:

Այսօր բջջային տեխնոլոգիաները բավականաչափ չեն օգտագործվում ճանաչողական և կրթական առաջադրանքներ լուծելու համար, դրանք դեռ չեն գտել իրենց պատշաճ կիրառումը, նույնիսկ այն դեպքում, երբ դպրոցն ունի բջջային օգտատերերի բավարար թվով սարքեր: Սա թույլ չի տալիս ասել, որ բջջային սարքերի հնարավորությունները լիարժեքորեն օգտագործվում են կրթության մեջ:

Օտար լեզվի ուսուցման բազմաթիվ մեթոդներ կան, որոնք ներառում են ինտերակտիվ և համակարգչային տեխնոլոգիաների կիրառում:

Այս տեխնոլոգիաները ապահովում են նյութի բարձր տեղեկատվական կարողություն, խթանում են ուսանողների ճանաչողական գործունեությունը, բարձրացնում դասի տեսանելիությունը, դրա իրականացման ինտենսիվությունը, անհատականացումը և տարբերակումը:

Հասկանալով ժամանակի պահանջներն ու քայլելով ժամանակին զուգընթաց, մեր կողմից մշակվել ու ներկայացվել են անգերենի ուսուցման համար խաղ-վարժություններ, որոնք լեզվի ուսուցման արդյունավետ ու ստանդարտ մեթոդներին կից ու անբաժան եղանակներ են:

Օգտագործված գրականության ցանկ

Кирдяева О. И., Комиссаров К. В. Звездный английский. Тренировочные упражнения в формате ОГЭ (ГИА). 6 класс: сборн. упражн. для общеобразоват. учреждений и шк. с углубл. изучением англ. яз. – М.: Просвещение. – 2015

Бухтеева Е. Е., Кравец О. И. Личностно ориентированный подход как основа учебной автономии // Среднее профессиональное образование. – 2014

Cooker L. Formative (self-)assessment as autonomous language learning. – Nottingham: University of Nottingham, 2012

Murase F. Measuring Learner autonomy: a pilot study // JALT Conference Proceedings. 2008. – № 7

Kukulska-Hulme A. Smart Devices or People? A Mobile Learning Quandary // International Journal of Learning and Media. 2014. – Vol. 4. – № 3-4

Gamble C., Aliponga J., Wilkins M., Koshiyama M., et al Examining Learner Autonomy Dimensions: Students' Perceptions of Their Responsibility and Ability // JALT Conference Proceedings. – 2012. – № 1.

Everhard-Theophilidou C. J. Degrees of Autonomy in foreign language learning– Thessaloniki: Aristotle University of Thessaloniki, 2012.